

# ՄԻՋ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԿԱՐԴԱՆ ԱՐԱՄՅԱՆ

«Նախագահի աշխատակազմի  
ղեկավարի առաջին տեղակալ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Փոքր՝ բաց տնտեսությամբ աշխարհի գրեթե բոլոր զարգացող երկրները պարտադրված են մասնակցելու համաշխարհային ու տարածաշրջանային ինտեգրման գործընթացներին, և այս ճանապարհին նշված երկրները սովորաբար անցնում են ինտեգրման փուլերով: Երրորդ փուլը մաքսային միությանն անցումն է, որից սկսած՝ ինտեգրումները պարտադիր տեղի են ունենում տարածաշրջանային մակարդակով: Միասնացման գործընթացներին մասնակցության հիմնական շարժառիթը նշված երկրների՝ շարունակական լրացուցիչ ՀՆԱ ստեղծելու հնարավորությունների ձեռքբերումն է, որն առկա է նաև Հայաստանի դեպքում: Ընդ որում, 4 հիմնական գործոնների (արտաքին առևտուր, ֆինանսական հոսքեր, աշխատուժի տեղաշարժ և ենթակառուցվածքների փոխկապվածություն) լույսի ներքո Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման ուղղության վերլուծության արդյունքները հոգուտ Եվրասիական տնտեսական միության են:

«Հիմնաբառեր» ինտեգրում, առևտրային խոչընդոտ, ինտեգրման փուլ, ՀՆԱ, տնտեսական գործոն

Երկրներն իրենց պատմական զարգացման ընթացքում անցնում են ինտեգրման փուլերով: Ընդ որում, աշխարհի երկրների փորձը ցույց է տալիս, որ փոքր՝ բաց տնտեսությամբ երկրներն ավելի մեծ շարժառիթներ ունեն մասնակցելու միասնացման այս կամ այն գործընթացներին: Տարածաշրջանային կամ համաշխարհային տարբերակի ընտրությունը կախված է այն բանից, թե տվյալ երկիրը ինտեգրման որ փուլում է գտնվում: Սովորաբար տարբերակվում է ինտեգրման 6 փուլ, և երկրները, որպես կանոն, հաջորդաբար շարժվում են յուրաքանչյուր փուլով: Այսինքն՝ դեռևս մեկ փուլը չհաղթահա-

րած, հնարավոր չէ անմիջապես անցում կատարել մյուս և ավելի բարձր փուլերին: Հայաստանը ևս, որպես փոքր՝ բաց տնտեսություն ունեցող երկիր, մասնակցում է ինտեգրման գործընթացներին:

Ձուգահեռներ անցկացնենք տնտեսական ինտեգրման դասական փուլերի և Հայաստանի փորձի միջև: Ինտեգրման առաջին փուլն արտոնյալ առևտուրն է, երբ վերջինիս կողմ հանդիսացող երկրների ռեզիդենտների համար կիրառվում են նվազեցված (արտոնյալ) մաքսատուրքեր՝ ի հակադրություն երրորդ երկրների: Ի դեպ, այս ռեժիմը կարող է տրամադրվել միակողմանիորեն: Հայաստանը ներկայումս օգտվում է այդպիսի՝ Եվրոմիության կողմից (GSP+) տրամադրված արտոնյալ ռեժիմից: ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Կանադայի, Ճապոնիայի կողմից նույնպես մեր երկրին միակողմանիորեն տրամադրվել են արտոնյալ առևտրի GSP համակարգեր:

Ինտեգրման երկրորդ փուլն ազատ կամ անմաքս առևտուրն է, որը բացառապես տարիֆային համակարգի գրոյացում է ենթադրում և արդեն պարտադիր կիրառվում է երկկողմ սկզբունքով: Հայաստանը ներկայումս ազատ առևտրի համաձայնագիր ունի ԱՊՀ անդամ երկրների և Վրաստանի հետ: Հարկ է նշել, որ մինչ այս փուլը երկրները կարող են ինտեգրվել ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև համաշխարհային միասնացման տարբերակով: Այսինքն՝ Հայաստանը նույն հաջողությամբ կարող էր ազատ առևտրի համաձայնագիր կնքել Հարավաֆրիկյան Հանրապետության հետ՝ միաժամանակ ազատ առևտրի ռեժիմ ունենալով նաև Վրաստանի հետ: Կարևոր է նաև այն, որ մինչ ինտեգրման այս փուլը երկրները դեռևս իրենց ձեռքում են պահում տնտեսության կառավարման երեք գործիքները՝ հարկաբյուջետային, դրամավարկային և արտաքին առևտրի քաղաքականությունները: Ազատ առևտրի ռեժիմից հետո յուրաքանչյուր հաջորդ փուլին անցման դեպքում երկիրը պարտադրված է լինում «զոհաբերել» տնտեսության կառավարման իր գործիքներից մեկը՝ պատվիրակելով այն վերազգային մարմնին, փոխարենը ստանալով տնտեսության մասշտաբի էֆեկտ և լրացուցիչ ՀՆԱ ստեղծելու հնարավորություն: Այս շարժառիթը հատկապես ներհատուկ է փոքր տնտեսությամբ երկրներին, որտեղ տնտեսական աճի համար աճող հատույց մասշտաբից դժվար է լինում ապահովել, իսկ վերջինս էլ խոչընդոտում է ներդրումների ներթափանցմանը տվյալ երկիր:

Ինտեգրման երրորդ փուլում ստեղծվում է մաքսային միություն: Այս դեպքում իրականացվում է միասնական առևտրային քաղաքականություն, իսկ բոլոր տեսակի առևտրային խոչընդոտները, այդ թվում՝ ոչ տարիֆային, քաղաքականությունների ներդաշնակեցման արդյունքում վերանում են: Այս պարագայում երկրները ինքնուրույն չեն կարող ազատ առևտրի համաձայնագիր կնքել երրորդ երկրի հետ, քանի դեռ նման որոշում չի կայացվել վերազգային մարմնի կողմից ամբողջ մաքսային տարածքի համար: Մաքսային միության ստեղծման և դրան հաջորդող ինտեգրման փուլերը ենթադրում են բացառապես տարածաշրջանային միասնացում: Հայաստանն արդեն իսկ այս փուլի նախաշեմին է. 2015 թ. հունվարի 2-ից կղառնա Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) լիիրավ անդամ: Ինտեգրման չորրորդ փուլը ընդհանուր շուկայի ստեղծումն է, երբ, մաքսային միության ստեղծմանը զուգընթաց, անդամ երկրները ներդաշնակեցնում են ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շուկաների կարգավորումները, թույլատրում են դրանց ազատ տեղաշարժ: Հինգերորդ փուլում ստեղծվում է արժույթի միասնական համակարգ կամ միություն, երբ երկրները պայմանավորվում են վարել միասնական դրամավարկային քաղաքականություն: Այս փուլում վերջիններս

պատվիրակում են վերազգային մարմնին տնտեսության կառավարման ևս մեկ գործիք՝ դրամավարկային քաղաքականությունը: Ինտեգրման վերջին փուլը ամբողջական միասնացումն է, երբ անդամ երկրներն իրականացնում են միասնական տնտեսական (արտաքին առևտրի, ֆիսկալ և դրամավարկային) քաղաքականություն:

Իսկ որո՞նք են ինտեգրման շարժառիթները: Վերն արդեն մասնակիորեն անդրադարձանք ինտեգրման շարժառիթներին, սակայն փորձենք ամբողջացնել դրանք: Նախ՝ արտաքին աշխարհից ներթափանցող տնտեսական խնդիրները համատեղ ավելի դյուրին են լուծվում: Երկրորդ՝ ընդլայնվում են շուկաները, վերացվում են մուտքի խոչընդոտները՝ դրանով իսկ ձեռնարկություններն ավելի մեծ խթաններ են ունենում նոր ներդրումներ կատարելու և ընդլայնվելու, քանի որ մի կողմից՝ ձեռնարկությունների ծախսերի կորը տեղափոխվում է ներքև, և ձեռնարկությունը այլ հավասար պայմաններում ձեռք է բերում գնային մրցունակություն, մյուս կողմից՝ ստանում է ներդրումների համար մասշտաբի էֆեկտի հնարավորություն: Երրորդ՝ խթանվում է արտադրական արժեչոթան, դրանով իսկ ավելի հեշտ է լինում համատեղ մրցել աշխարհի մնացած երկրների և տարածաշրջանային տնտեսական միավորումների հետ: Ի վերջո, այս ամենի արդյունքում ստեղծվում են տնտեսական աճի նոր հնարավորություններ:

Այսպիսի եզրահանգման էին եկել նաև տնտեսագետներ Չեչինին և Բոլդվինը 1992 թ. Եվրոպայի «ապագան մոդելավորելիս»: Դա հետագայում ապացուցվեց նաև այլ տնտեսագետների փորձառական (էմպիրիկ) հետազոտությունների թվային արդյունքներով: Վերջիններս դիտարկմամբ՝ առևտրի խոչընդոտների վերացումը և կապիտալի ու ապրանքների ազատ տեղաշարժը ստեղծում են լրացուցիչ տնտեսական աճի հնարավորություններ<sup>1</sup>: Ընդ որում, Չեչինին գնահատել էր այդ հնարավորությունների կայուն (ստատիկ) էֆեկտը՝ ՀՆԱ 2.5%–6.5%, իսկ Բոլդվինը նաև դինամիկ ազդեցությունը՝ ՀՆԱ տարեկան լրացուցիչ 0.2–0.9 տոկոսային կետով աճ<sup>2</sup>:

<sup>1</sup> Համաշխարհային տնտեսական ճգնաժամից և հատկապես Հունաստանի պարտքի ճգնաժամից հետո քննադատություններ եղան որոշ տնտեսագետների շրջանակներում առ այն, որ Չեչինի և Բոլդվինի վերլուծությունների արդյունքները չարդարացան. ըստ վերջիններիս կանխատեսման՝ այս ընթացքում ակնհայտ պետք է լինեի առաջարկի առաջնորդման տնտեսական աճ բոլոր երկրներում (Supply Push Economic growth): Մենք համաձայն չեն այդ տեսակետին, քանի որ ԵՄ տնտեսությունում այս ընթացքում կառուցվածքային խնդիրներ առաջացան, ինչը ոչ թե ինտեգրման թերությունն էր, այլ այն, որ ԵՄ որոշ երկրներ թերացան ժամանակին կատարելու կառուցվածքային բարեփոխումներ: Ընդ որում, դրանց մի մասը, այս առումով, ժամանակի ընթացքում առաջ ընկավ, որոշներն էլ, արդեն իսկ հետ լինելով, ավելի մեծացրին տնտեսությունների հիմնարարների միջև ձեղքը՝ այսպիսով ԵՄ տնտեսական տարածքում խորացնելով կառուցվածքային խնդիրները: Հունաստանն այս իմաստով ակնառու օրինակ է, և պարտքի ճգնաժամն էլ ապացուցեց դա: Մասնավորապես՝ Հունաստանի և ԵՄ առաջատար երկիր համարվող Գերմանիայի տնտեսական հիմնարարների որակների միջև տարեցտարի ձեղքն աճում էր: Ընդ որում, Հունաստանի՝ Եվրոգոտում գտնվելը նպաստեց պարտքի ճգնաժամին, քանի որ տնտեսական հիմնարարների նման վարքագծի հետևանքով կամ պետք է փոխարժեքն արժեզրկվեր, որպեսզի ապահովվեր հավասարակշռություն (սակայն դա ամրագրված էր ըստ ERM II համակարգի), կամ տոկոսադրույքներն աճեին, կամ գները՝ միավոր աշխատուժի ծախսի աճի արդյունքում (գները կարգավորվում էին ԵՄ կենտրոնական բանկի քաղաքականությամբ, տոկոսադրույքներն էլ շատ էին տարբերվում կապիտալի ազատ տեղաշարժի և ներդաշնակեցված ֆինանսական շուկաների պատճառով, հակառակ դեպքում իրավարարության (արբիտրաժ) հնարավորություն կարող էր ծագել): Սակայն դրանցից ոչ մեկն էլ տեղի չունեցավ, քանի որ Հունաստանը Եվրոգոտում էր:

<sup>2</sup> Ավելի մանրամասն տես Paolo Cecchini with Michel Catinant and Alexis Jacquemin, *The European Challenge*, 1992. The Benefits of a Single Market, Richard Baldwin, *The Growth Effects of 1992*, NBER Working Paper.

Պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս. երկրները տարածաշրջանային ինտեգրման վերաբերյալ որոշումներ կայացնելիս ուշադրություն են դարձնում 4 հիմնական գործոնների՝ առևտրային, ֆինանսական, աշխատուժի շարժի և ենթակառուցվածքների փոխկապակցվածությանը: Ընդ որում, որքան այս գործոններով երկրի տնտեսությունը սերտ է փոխկապված տվյալ տնտեսական տարածաշրջանի հետ, այնքան ինտեգրման ընթացքում խոչընդոտների վերացումը և քաղաքականությունների ներդաշնակեցումն այլ հավասար պայմաններում մեծ տնտեսական էֆեկտների կհանգեցնեն: Այլ կերպ ասած՝ որպեսզի Չեչինիի և Բուրվիի գնահատականների փոխկապակցվածությունը գործի, անհրաժեշտ է մինչև 3-րդ և հաջորդ փուլին անցնելը ուշադրություն դարձնել վերոնշյալ 4 գործոններով տարածաշրջանների հետ տվյալ երկրի փոխկապակցվածությանը: Անդրադառնալով դրանց Հայաստանի օրինակով՝ դիտակետում պահելով երկու տարածաշրջան՝ Եվրասիական տնտեսական միություն (ԵՏՄ) և Եվրոմիություն (ԵՄ):


Առաջինը առևտրային գործոնն է: Այն վերլուծելիս սովորաբար երկրները համեմատաբար մեծ տեղ են տալիս արտահանմանը, այսինքն՝ արտահանվող ապրանքների բնույթին և ծավալին: Պատճառը շատ պարզ է. արտահանման նոր հնարավորությունների առաջացումը մեծացնում է տնտեսական աճի ներուժը: Իհարկե, սա չի նշանակում, թե ներմուծման կազմն ու կառուցվածքը կարևոր չեն, սակայն այստեղ ավելի շեշտադրում ենք արտահանման ցուցանիշը, քանի որ արտահանումն է ուղղակիորեն ապահովում տնտեսական աճ<sup>3</sup>:

Հայաստանի արտահանման ընդհանուր կառուցվածքում ԵՏՄ կշիռը 2013-ի տվյալներով կազմել է 23.7%, ԵՄ-ինը՝ 33.4%, թեև դինամիկան հիմնականում հոգուտ ԵՏՄ-ի է. 2007-ին դեպի ԵՏՄ և ԵՄ արտահանման կշիռները կազմել են, համապատասխանաբար՝ 18.3% և 48.8%: Սակայն, բացի դինամիկայից և կշռից, շատ կարևոր է, թե ինչ տեսակի ապրանքներ են արտահանվում: Որպես կանոն, ոչ առևտրային խոչընդոտների վերացումը մեծ տնտեսական էֆեկտ է ապահովում հետերոգեն (տարասեռ) ապրանքների դեպքում, քան հոմոգեն (միատարր, հումքային): Ընդ որում, տարասեռ ապրանքների պատրաստման և արտահանման դեպքում ավելի տեղին է խոսել մրցունակության մասին, քան հումքային ապրանքների պարագայում է: Օրինակ՝ նավթը նավթ է, անկախ այն բանից, թե որտեղ է արտադրվում. շուկան այս դեպքում չի տարբերակում և տարբեր գներ չի սահմանում: Այսինքն՝ ոչ առևտրային խոչընդոտների (ծագման և որակի հավաստագրեր, սանիտարիայի և ֆիտոսանիտարիայի հավաստագրեր, լիցենզիաներ, թույլտվություններ և այլն) նվազեցումը մեծ արդյունք կարող է ապահովել հատկապես տարասեռ ապրանքների արտահանման դեպքում: Հատկանշական է, որ ԵՏՄ արտահանվող ապրանքների 95.8%-ը այդպիսի ապրանքներ են, մինչդեռ ԵՄ արտահանվող ապրանքների 82.0%-ը հումքային են: Սա առաջին կարևոր նախապայմանն է (գծապատկեր 1)<sup>4</sup>:

<sup>3</sup> Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ ներմուծման ծավալները ԵՏՄ-ի և ԵՄ-ի համար CIF-ով հաշվարկած, դոլարային արտահայտությամբ, շատ մոտ են. 2013 թ. կազմել են, համապատասխանաբար՝ 1,152 մլն և 1,163 մլն ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է կառուցվածքին, ապա ԵՏՄ-ից ներմուծման մեջ համեմատաբար մեծ ծավալ են կազմում վառելիքահումքային ապրանքները, ինչը նաև ուղղակի ազդեցություն ունի տնտեսության արտադրական բնույթի ծախսերի վրա:

<sup>4</sup> Հաշվարկները կատարել է հեղինակը՝ հիմք ընդունելով ութամիջ դասակարգմամբ ապրանքների արտահանման կառուցվածքն ըստ երկրների և ապրանքատեսակների:

Պետք է հաշվի առնել նաև, որ ԵՄ շուկաներ տարասեռ ապրանքների ներթափանցումը անհամեմատ ավելի դժվար է, քան ԵՏՄ՝ պայմանավորված երեք հիմնական պատճառներով: Նախ՝ ակնհայտ է, որ տարասեռ ապրանքների շուկաները մոնոպոլ մրցակցային են<sup>5</sup>, և, այս տեսանկյունից, ԵՄ շուկաները բավականին հագեցած են: Հետևաբար՝ երկրի արտադրողը պետք է արտադրողականության բավարար մակարդակ ունենա, որպեսզի ի գորու լինի վճարելու շուկա մուտքի «սառցե» ծախսերը<sup>6</sup>, և, այս առումով, մեր տնտեսավարողների արտադրողականությունը դեռևս զիջում է ԵՄ շուկաները գրաված այլ արտադրողների արտադրողականությանը<sup>7</sup>: Երկրորդ՝ ԵՄ շուկաներում մրցակցությունն ավելի սուր է, ապրանքների որակի նկատմամբ պահանջներն ավելի խիստ են<sup>8</sup>: Եվ, վերջապես, երկրորդ գործոնից ածանցված՝ ԵՄ շուկայի պետական կարգավորման համեմատաբար խիստ պայմանները տնտեսավարողից համեմատաբար մեծ ծախսեր են պահանջում:



**Գծապատկեր 1. ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի**

<sup>5</sup> Մոնոպոլ մրցակցությունը ոչ կատարյալ մրցակցության ձևերից է, երբ տարբեր արտադրողներ թողարկում են տարասեռ արտադրանքներ, որոնք միմյանցից առնվազն ապրանքանիշով կամ որակով տարբերվում են և չեն կարող կատարյալ փոխարինիչ լինել մեկը մյուսին. օրինակ՝ գարեջուրը կամ հագուստեղենը: Մոնոպոլ մրցակցության մոդելները հաճախ օգտագործվում են տնտեսության ենթաշյուղերի վարքագծերը մոդելավորելու համար, ինչպես օրինակ՝ ռեստորանային ծառայությունները, հագուստ, կոշիկ, ոգելից խմիչքներ արտադրողների ոլորտը և այլն: Մոնոպոլ մրցակցության տեսության հիմնադիրը համարվում է եղվարդ Հասթինգս Չեմբերլինը (1933 թ.): Յոհան Ռոբինսոնը հետագայում հրապարակեց «Ոչ կատարյալ մրցակցության տնտեսագիտություն» աշխատությունը, որն ավելի զարգացրեց Չեմբերլինի տեսությունը և հստակ տարանջատեց կատարյալ և ոչ կատարյալ մրցակցությունները:

<sup>6</sup> Տնտեսագիտության ակադեմիական աշխարհում այս տերմինը հանդիպում է այն համատեքստում, երբ տնտեսավարողը նոր շուկա ներթափանցելու համար պարտադրված է լինում լրացուցիչ ծախսեր կրելու, օրինակ՝ շուկայավարման ռազմավարության մշակման, ապրանքի առաջնորդման, գովազդի և այլ նպատակներով: Ընդ որում, որքան շուկան հագեցած է, և ապրանքի որակի նկատմամբ սպառողը պահանջկոտ է, այնքան ավելի մեծ են լինում մշակված ծախսերը:

<sup>7</sup> Այստեղ նկատի է առնվում ռեսուրսների ընդհանուր արտադրողականությունը (Total Factor Productivity-TFP):

<sup>8</sup> Ընդունված դոկտրինա է. որքան սպառողը գնողունակ է լինում, այնքան ավելի խիստ և պահանջկոտ է դառնում սպառող ապրանքի որակի նկատմամբ, իսկ ԵՄ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կրկնակի չափով ավելի է ԵՏՄ նույն ցուցանիշից:

Երկրորդ գործոնը ֆինանսական հոսքերն են: Դրանք ուշարժան են 3 ուղղությամբ՝ ուղղակի ներդրումներ, պորտֆելային (փաթեթային) ներդրումներ և փոխառություններ: Ի սկզբանե նշենք, որ ներկա պահին պորտֆելային ներդրումները ՀՀ տնտեսությունում այնքան մեծ չեն, որ որոշումների կայացման առումով դերակատարություն ունենան, և դա բնական կարելի է համարել, քանի դեռ չունենք զարգացած կապիտալի շուկա: Փոխառությունների աշխարհագրության մասով տվյալները հստակ չեն, և ԱՎԾ-ն էլ դրանք չի հրապարակում<sup>9</sup>: ՀՀ-ում ուղղակի ներդրումների ծավալով առաջին տեղում Ռուսաստանի Դաշնությունն է. վերջին 7 տարիներին մեր երկրում կատարվող ուղղակի ներդրումների 48.6%-ը բաժին է ընկել ՌԴ-ին՝ ԵՄ-ի 30.6%-ի դիմաց<sup>10</sup>:

Երրորդ գործոնով՝ աշխատուժի ազատ տեղաշարժով ևս ՌԴ-ն առաջին տեղում է: Աշխատուժի ժամանակավոր միգրացիայի հետևանքով Հայաստան հոսող գործուժային եկամուտների 80%-ից ավելին ՌԴ-ից է, ինչը նշանակում է, որ մեր աշխատուժը ավելի հեշտ է ինտեգրվում ռուսական աշխատուժի շուկայում, քանի որ լեզվական և մշակութային խոչընդոտներն այստեղ ավելի նվազ են:

Չորրորդ գործոնը՝ ենթակառուցվածքների ինտեգրման կամ փոխկապվածության մակարդակը, մեր տնտեսության համար մնում է որպես գլխավոր մարտահրավեր: Սակայն, այնուամենայնիվ, ըստ Համաշխարհային բանկի արտաքին առևտրի միջին ծախսի համաթվի, այս պահին դեպի ԵՏՄ առևտրի միջին ծախսն ամենամրցունակն է՝ այլ տարածաշրջաններ արտահանելու համեմատությամբ<sup>11</sup>:

Աղյուսակ 1

**Արտաքին առևտրի միջին ծախսի համաթիվը**

	ԱՄՆ-ի հետ		Գերմանիայի հետ		Ճապոնիայի հետ		ՌԴ-ի հետ	
	2005	2011	2005	2011	2005	2011	2005	2011
<b>Հայաստան</b>	232	196	130	138.7	469	398.8	112	113.3
<b>Ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներ</b>	174	179	198	189	254	243	209	232
<b>Եվրոպական և Կենտրոնական Ասիա</b>	191	205	114	111	301	308	127	130

Աղբյուրը. Համաշխարհային բանկի 2014 թվականի առևտրի ծախսերի տվյալների բազա

**Այսպիսով՝**

- Ջարգացող փոքր՝ բաց տնտեսությամբ գրեթե բոլոր երկրներն ակտիվորեն մասնակցում են տնտեսական ինտեգրման գործընթացներին և այս առումով ունեն ընդգծված շարժառիթներ:

<sup>9</sup> Իրականում այս ցուցանիշը ներկայիս ֆինանսների համընդհանրական աշխարհի պայմաններում այդքան էլ չի կարևորվում, քանի որ տնտեսավարողները կարող են փոխառություններ ներգրավել միջազգային ֆինանսական հարթակներում, որտեղ աշխարհագրություն առկա չէ:

<sup>10</sup> ԱՎԾ-ի հրապարակած համադրելի թվային շարքը 2007 թ.-ից է:

<sup>11</sup> Այս համաթվի հաշվարկման ժամանակ մեծ կշիռ է տրվում տրանսպորտային ծախսերին:

- Երկրները պարտադրված են գնալու տարածաշրջանային ինտեգրման, եթե թևակոխում են միասնացման երրորդ և ավելի բարձր փուլեր:
- Տարածաշրջանային ինտեգրման դեպքում ոչ տարիֆային բնույթի խոչընդոտների նվազեցումն ի հայտ է բերում լրացուցիչ ՀՆԱ ստեղծման հնարավորություն:
- Այդ հնարավորությունն ավելի մեծ է, եթե դեպի տվյալ տարածաշրջան արտահանման կառուցվածքում գերակշռում է տարասեռ, այլ ոչ թե հումքային ապրանքատեսակների արտահանումը:
- Երկրները տարածաշրջանային միասնացման վերաբերյալ որոշումների կայացման համատեքստում հիմնականում ուշադրություն են դարձնում վերը նշված 4 տնտեսական գործոններին, ըստ որոնց ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության շարժառիթներն ավելի հստակ են:

**ВАРДАН АРАМЯН**

*Первый заместитель руководителя  
аппарата президента РА*

***Перспективы региональной интеграции Армении.-***

Почти все развивающиеся страны в мире с малыми открытыми экономиками вынуждены принимать участие в глобальных и региональных интеграционных процессах. На этом пути страны обычно проходят через этапы интеграции и, начиная с третьего этапа - „таможенный союз”, интеграция обязательно происходит на региональном уровне. Основная мотивация принятия участия в интеграционных процессах для малых открытых экономик, это создание возможности приобретения перманентного дополнительного ВВП, которая также очевидна и для Армении. При этом, результаты анализа направления региональной интеграции Армении, на базе четырех основных экономических факторов (внешняя торговля, финансовые потоки, передвижение рабочей силы и взаимосвязанность инфраструктур), показывают очевидность в пользу Евразийского экономического союза.

**VARDAN ARAMYAN**

*First Deputy Chief of Staff of the Office  
to the President of the RA*

***Armenia's Perspectives of Regional Integration.-***

Developing countries with small open economies are obliged to participate in the regional or global integration processes worldwide. They usually move through integration phases on their ways of development and since entering the third phase the integration takes place only on the regional level. The small open economies' main incentive for economic integration is to create new opportunities for additional permanent economic growth and that is the case for Armenia too. The analysis of dimensions for Armenia's regional integration through 4 key economic factors (trade, financial flows, labor movement and infrastructure interconnectedness) shows that the results are in favor of Eurasian Economic Union